**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ**
**ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ**
**ՈՐՈՇՈՒՄ**

**Արձանագրություն թիվ 10**
**22.04.2024թ.**

1. **ՀԱԱՀ Անասնաբուժական - բժշկագիտության և անասնաբուծության, Ագրոբիզնեսի և տնտեսագիտության, Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետներում ուսումնամեթոդական և գիտական աշխատանքների կատարման ընթացքի, նյութատեխնիկական ապահովվածության և խնդիրների վերաբերյալ**

Ընդունել ի գիտություն:

2. **Արմինե Մկրտչի Համբարձումյանի Ե.23.06 - «Գեոդեզիա, ներառյալ քարտեզագրություն և կադաստր» մասնագիտությամբ «Հազվագյուտ բուսատեսակների տարածման արեալների քարտեզագրման և կառավարման խնդիրները ՀՀ լեռնամարգագետնային գոտում» թեմայով թեկնածուական ատենախոսական աշխատանքի մասնագիտության և թվանշի փոփոխության հարցի վերաբերյալ**

Հաշվի առնելով ատենախոսական աշխատանքի և հրատարակված գիտական հոդվածների բովանդակության համապատասխանությունը Զ.01.01 - «Ընդհանուր երկրագործություն, հողագիտություն, հիդրոմելիո-րացիա, ագրոքիմիա և ագրոէկոլոգիա» մասնագիտությանը, փոխել Արմինե Մկրտչի Համբարձումյանի «Հազվագյուտ բուսատեսակների տարածման արեալների քարտեզագրման և կառավարման խնդիրները ՀՀ լեռնամարգագետնային գոտում» թեմայով ատենախոսական աշխատանքի մասնագիտությունն ու թվանիշը և հաստատել Զ.01.01 - «Ընդհանուր երկրագործություն, հողագիտություն, հիդրոմելիորացիա, ագրոքիմիա և ագրոէկոլոգիա» մասնագիտությամբ:

3. **ՀԱԱՀ ուսանողների գիտելիքի գնահատման համակարգում դրական գնահատականի անցողիկ ստորին շեմի, ինքնուրույն աշխատանքների պաշտպանության ժամկետների փոփոխության հարցերի վերաբերյալ**

Հանձնարարել ՈԳԱԿ տնօրեն Ա. Դաշտոյանին գիտելիքի գնահատման անցողիկ ստորին շեմի և ինքնուրույն աշխատանքի ներկայացման ժամկետի փոփոխության հարցերը լրացուցիչ ուսումնասիրել և դրանց անհրաժեշտության հիմնավորումները ներկայացնել գիտական խորհրդի քննարկմանը:

4. **Համալսարանում իրականացվող ուսանողական գիտական շաբաթի ձևաչափի փոփոխության վերաբերյալ**

Ընդունել ի գիտություն:

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Հ.Ս. ԶԱՔՈՅԱՆ

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ